ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 05 » դեկտեմբերի 2024թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 12

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հինգերորդ նստաշրջանի՝ դեկտեմբերի 05-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնչորս անդամները, բացակա էր՝ Միշիկ Գևորգյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 05-ի նիստի օրակարգը՝ համաձայն՝ ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 05-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Անշարժ գույքի հարկի գծով արտոնություն **տրամադրելու մասին**:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 0-10 տարեկան երեխաներին Ամանորի կապակցությամբ նվերներ տրամադրելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 23-ի թիվ 65-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին՝

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 կետով, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ավագանին որոշեց՝ «ԷՅ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամին անշարժ գույքի հարկի գծով տրամադրել արտոնություն՝ ազատելով 2023-2024 թվականների համար հաշվարկված անշարժ գույքի հարկից՝ 676 620 (վեց հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով և դրա նկատմամբ հաշվարկված տույժերից՝ 75 647 (յոթանասունհինգ հազար վեց հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ գումարի չափով:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 0-10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 0-10 տարեկան երեխաների համար Ամանորյա նվերներ գնելու կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 08 բաժնի 02 խմբի 04 դասի «Այլ մշակույթային կազմակերպություններ» ծրագրի 4269 հոդվածով նախատեսված գումարից տրամադրել 847.000 (ութ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով՝

ավագանին որոշեց՝ Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.
հանձնաժողովի նախագահ՝

1) Պապիկյան Վահրամ Ռոմիկի – Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

հանձնաժողովի քարտուղար՝

2) Շահնազարյան Թամարա Էդիկի - ավագանու անդամ

հանձնաժողովի անդամներ՝

3) Մարգարյան Սիլվա Ստեփանի ավագանու անդամ.

4) Ասրյան Աննա Տիգրանի - ավագանու անդամ

5) Մաթևոսյան Հասմիկ Գառնիկի–Ստեփանավանի ՄՄԾՏԿ-ի սոցիալական աշխատանքի և զբաղվածության բաժնի ավագ սոցիալական աշխատող

6) Ղարաջյան Գրիշա Մուրադի – ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ստեփանավանի բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան

7) Ղազարյան Անի Արամի - Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 23-ի թիվ 65-Ա որոշումը:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2024 թվականի դեկտեմբերի 25-ը, ժամը՝ 12:00-ն:

8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2024թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների

մասին հաղորդում՝ 08.11.2024-05.12.2024թթ. ժամանակահատվածի դրությամբ և 2024թ. տարեսկզբից.

Սոց. վճարի տեսակը	09.11.2024- 05.2.2024			
	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ /	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ /
Երեխայի ծննդյան կապակցությամբ	**4**	**120,0**	**54**	**1 920,0**
հուղարկավորության կազմակերպման համար	**4**	**160,0**	**60**	**2 400,0**
սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում	**3**	**80**	**185**	**3200**
նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար	1	40,0	14	560,0
Հավաքների մասնակցության համար	2	40,0	63	1 260,0
Այլ			7	280,0
Մայիսի 9-ի կապակցությամբ			1	100,0
Հանրակրթական դպրոցների 2024-2025թթ ուս. տարվա առաջին դասարանցիներ			59	590,0
Վերջին զանգի կապակցությամբ			41	410,0
Ընդամենը սոց վճար	**11**	**360,0**	**299**	**7 520,0**
Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված կրթական, մշակութին և սրորտային նպատսներ, այդ թվում.	**1**	**40**	**81**	**1190**
դրամական մրցանակներ	1	40,0	14	520,0
Սոց. վճարի տեսակը	**09.11.2024-05.2.2024**		**2024թ.տարեսկզբից**	

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապյան Հարություն Միշիկի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Վերմիշյան Կարլեն Ջիվանի

Չատինյան Վանո Վալերի

Գրիգորյան Աննա Հրայրի

Սերոբյան Անի Սամվելի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արպիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը _____

Կ.տ.